ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների թեման արծարծելիս, բնականաբար, աչքի է զարնում այն հանգամանքը, որ սեպագիր արձանագրություններում նրանք հիշատակվում են հինարևելյան արքաների դեպի Հայկական լեռնաշխարհ ձեռնարկած նվաճողական արշավանքների նկարագրություններում մեջ: Ուստի ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե ասորեստանյան, խեթական և ուրարտական, այլև օտար տարածքների հետ: Հետևաբար, երբ մասնագիտական գրականության մեջ երբեմն այդ ամենը հապճեպ անվանում են Ասորեստանի, Խեթական թագավորության և Ուրարտուի տոպոնիմիկա և էթնոնիմիկա, ապա դա ամենևին լիարժեք չի արտահայտում պատմական իրողությունը: Դրանք ավելի շուտ սեպագիր աղբյուրներում հիշատակված օտար տեղանուններ և ցեղանուններ են՝ ասորեստանցիների, խեթերի և ուրարտացիների կողմից հարմարեցված իրենց վանկագիր սեպագրի կանոններին: Օրինակ, հին հայկական Աղձնիքը, սեպագիր աղբյուրներում մատուցված է «Ալսե», «Ալզի» և «Ալզինի» ձևերով խեթերի, ասորեստանցիների և ուրարտացիների մոտ, Տայքը՝ «Դայաենի» և «Դիաուխի» ձևերով ասորեստանցիների և ուրարտացիների մոտ, Կաղմեայ տունը՝ «Կաղմուխի», իսկ Կրերեացը՝ «Կիրրուրի» ձևերով ասորեստանցիների մոտ, Մալաթիան՝ «Մալդիյա», «Միլիդիա» և «Մելիտեա» ձևերով խեթերի, ասորեստանցիների և ուրարտացիների մոտ, տուն Թորգոմայ–ն՝ «Թեգարամ(մ)ա» և «Թիլ Գարիմմու» ձևերով խեթերի և ասորեստանցիների մոտ, Տմորիքը՝ «Տումուրրու»

ձևով ասորեստանցիների մոտ, Ծոփքը «Իշուա», «Իսուվա» և «Ծուփանի» ձևերով ասորեստանցիների, խեթերի և ուրարտացիների մոտ և այլն: Նշենք նաև, որ իրենց ռազմական արշավանքների ընթացքում ասորեստանցիները մուտք են գործել Հայկական լեռնաշխարհի հարավային, արևելյան, արևմտյան և հյուսիս–արևմտյան, իսկ խեթերը, հազվադեպ սոսկ արևմտյան որոշ տարածքներ: Այդ պատճառով էլ հայ–ասորեստանյան, մանավանդ հայ–խեթական տեղանվանական ընդհանրությունները կազմում են համեմատաբար սահմանափակ թիվ:

Հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունները, քանակային ատեմով, բավական մեծ է: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ուրարտացիների առաջխաղացումը հարավից աստիճանաբար ընդգրկել է համարյա ողջ Հայկական լեռնաշխարհը: Իսկ բուն ուրարտական տեղանունները սեպագրերում, ինչպես հայտնի է, հիմնականում սերում են նրանց արքաների անուններից և դիցանուններից, ըստ որում, դրանց թիվը չի հասնում երեք տասնյակի: Ելնելով վերոհիշյալից, դժվար չէ կռահել, որ հայ–ուրարտական տեղանունների ընդհանրությունները արծարծվող պրոբլեմում պետք է գրավեն կենտրոնական տեղ: Հետևաբար, երբ մասնավորելով խոսքը վերաբերվում է հայ–ուրարտական տեղանունների և ցեղանունների ընդհանրություններին, պետք է նկատել, որ դրանք մասնագիտական գրականության մեջ բացահայտվել են դեռևս սեպագիր աղբյուրների վերծանությունից և դրանց առաջին հրատարակություններից սկսած:

19–րդ դարի վերջին ականավոր ռուս արևելագետ Միխայիլ Նիկոլսկին, Արագած լեռան հյուսիս–արևմտյան լանջին, Կուլիջան գյուղի մոտ, Կարանգու (հայկական Կարկաղան) գետի ափին փորագրված ժայռագիր արձանագրության «Կուլիանի» ցեղանունը իրավամբ համարել է այժմյան Կուլիջան բնակատեղիի անվան նախատիպը[1]:

Ավելի ուշ, 1900թ., Հովսեփ Սանդալջյանը Վենետիկում ֆրանսերեն լեզվով հրատարակած «Ուրարտական սեպագիր արձանագրություններ» դիվանում, առաջարկեց հայ–ուրարտական տեղանունների մի քանի նոր համոզիչ ընդհանրություններ: Դրանցից են Տուարածինիի հովիտ–Տուարածատափը՝ Տուրուբերան նահանգի 7–րդ գավառը Արածանիի (ասորեստանյան սե-

պագրերի Արծանիայի) վերին հոսանքում, Վանա լճից հյուսիս–արևմուտք, Զաբախա–Ջավախքը՝ Գուգարաց բդեշխության 6–րդ գավառը այժմյան Ախալքալաքի շրջանում և հարակից տարածքներում, Ծուփանի–Ծոփքը՝ Չորրորդ Հայքի 5–րդ գավառը Արածանիի և Եփրատի խառնարանի շրջանում[2]:

Հիշյալ համադրություններին շուտով հետևում է հին Հայաստանի Գուգարաց բդեշխության 9–րդ գավառի՝ Կղարջքի նույնացումը ուրարտական սեպագիր աղբյուրների «Կատարգայի» հետ՝ գերմանացի արևելագետ Հ. Մարկվարտի կողմից[3]:

Նիկողայոս Մառի գրչին է պատկանում ուրարտական տարեգրությունների Աբիլիանիի և հին հայկական Աբեղեանքի՝ Այրարատ նահանգի 3–րդ գավառի համադրությունը Արաքսի վերին հոսանքի ձախափնյա հատվածում, որը նա առաջարկել է դեռևս 1922թ. Սարդուրյան նորահայտ տարեգրության հրատարակության առթիվ[4]: Հետագայում Գրիգոր Ղափանցյանը առաջարկեց մի կողմից Խորխորյան տարեգրության «Գուրկուի» և հին հայկական «Քարքե» լեռնանվան համադրությունը պատմական Հայաստանի Հաշտեանք գավառում, Վանա լճից հյուսիս–արևմուտք, մյուս կողմից՝ ուրարտական սեպագրի «Ուրտեխի» երկրանվան և Մեծ Հայքի 10–րդ նահանգի՝ Արցախի համադրությունը[5]:

Վերին աստիճանի ուշագրավ են նաև բազմավաստակ Նիկողայոս Ադոնցի եզրահանգումներն այն մասին, որ ուրարտական սեպագրերի «Ալիա» քաղաքանունը անհարաժեշտ է համարել անցյալում Վանա լճի հյուսիսային եզերքը զբաղեցրած Տավրուբերան նահանգի Ադիովխո գավառի, Էրիկուախի երկրանունը՝ Ղազար Փարպեցու մոտ հիշատակված Այրարատ նահանգի Մեծ և Փոքր Մասիսների հյուսիսային և արևելյան փեշերը զբաղեցրած Մասեացոտն գավառի Որկովի գյուղի, իսկ «Գստուրախի» քաղաքանունը՝ Արածանիի գետաբերանից հարավ ընկած Չորրորդ Հայքի Գաւրէք գավառի անվանումների նախատիպերը[6]:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև Հովհաննես Կարագյոզյանի կողմից առաջարկված հայ–ուրարտական Կոտոմ–Կուտումե համադրությունը: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ և՝ Թովմա Արծրունու պատմության հին հայկական Աղձնիք նահանգը՝ իր Կոտոմ բնակատեղիով, և՝ Մենուայի Անզավուր–թեփեի նմանօրինակ արձանագրությունների Ալզինի երկիրը՝ Կուսաւմե բնակատեղիով հանդես են գալիս անխզելի կապի

մեջ: Ի դեպ, բավական հրապուրիչ է, որ հեռու անցյալի Կուտռումե–Կոտոմը, համարյա անփոփոխ Կոտռում ձևով, մինչ օրս պահպանել է իր գոյությունը Թուրքիայի քարտեզի վրա՝ Վանա լճի հարավ–արևմտյան անկյունից ոչ հեռու[7]: Բացի այդ, ուրարտական սեպագրերի Աբունի երկիրը սույն հոդվածի հեղինակը նույնացրել է Այրարատ նահանգի Հաւնունիք գավառի, Տարիունի երկիրը՝ նույն նահանգի Բասեն գավառի Դարոյնք բնակատեղիի (այժմյան Հասան–ղալա կամ Պասինլեր), Ծուլուկու երկիրը՝ Սյունիքի Ծղուկ գավառի, Գիառնիանի երկիրը՝ Գեղամա լեռներում ընկած Գառնի բնակատեղիի, իսկ Թարրաբա երկիրը՝ Պարսկահայքի Թրաբի գավառի (Ուրմիա լճից արևմուտք) անվանումների հետ[8]:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես հայտնի է, բացահայտվել են նաև հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների այլ զուգադրումների մի ամբողջ շարք: Դրանցից են՝ Էնզիտե–Անձիտը, Կուլխա–Կողքիսը, Արծանիա–Արածանին, Կուլլիմմերի–Կուլմերի–Քղիմարը, Մարկասու–Մսրաշը, Նիխիրյա–Նփրկերտը, Տուշպա–Տուրուշպա–Տոսպը, Թումիշկի–Թմնիսը, Անաշե–Ալաշկերտը, Զուանի–Զիվինը և այլն, և այլն:

Վերոհիշյալով, անշուշտ ամենևին չեն սպառվում հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունները: Այդ բավական ծավալուն և արտակարգ կարևոր ու հետաքրքիր թեման կարիք ունի հատուկ ուսումնասիրության: Սակայն մեր այս հակիրճ հաղորդման բուն նպատակը ոչ թե այդ ընդհանրությունների սպառիչ արտացոլումն է, այլ դրանց տակ թաքնված պատմական արմատների բացահայտումը:

Այստեղ վերին աստիճանի կարևոր խնդիր է պարզել, թե արդյոք՞ տվյալ դեպքում մենք գործ ունենք հինարևելյան, թե՞ հին հայկական տեղանունների ու ցեղանունների հետ: Ի դեպ կարծում ենք, որ այդ հարցին սպառիչ պատասխան կարող են տալ ինչպես սեպագիր, այնպես էլ հայկական գրավոր աղբյուրները:

Օրինակ, ասորեստանյան, խեթական և ուրարտական սեպագրերը, վկայում են, որ դրանք ի սկզբանե եղել են օտար տարածքներ, որոնք հինարևելյան արքաների կողմից ասպատակվել և նվաճվել են երկարատև և համառ ռազմական արշավանքների

շնորհիվ: Իսկ հին հայկական գրավոր աղբյուրները, ինչպես հայտնի է, դրանք ներկայացնում են որպես պատմական Հայաստանի նահանգներ, գավառներ, բնակատեղիներ և աշխարհագրական այլ վայրեր:

Ասվածից ե հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական համադրություններից հստակ երևում է, որ դրանք, անկասկած, պետք է դասել հին հայկական տոպոնիմների և էթնոնիմների շարքին: Նվաճելով այդ նահանգները, գավառները և բնակատեղիները, ասորեստանցիները, խեթերը և ուրարտացիները, բնականաբար, ստիպված են եղել նրանց հայկական հորջորջումները արձանագրություններում հարմարեցնել իրենց վանկագիր սեպագրի կանոններին: Դա է պատմական իրողությունը:

Մյուս կողմից, ասորեստանյան սեպագիր աղբյուրները վկայում են, որ դեռևս ցեղային միությունների դարաշրջանի ուրարտացիները, մ.թ.ա. 13–9–րդ դարերում, Հայկական լեռնաշխարհի խորքերն են աստիճանաբար ներթափանցել հարավից (Տիգրիսի և Մեծ Զաբի վերին հոսանքներից)՝ վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների կատաղի դիմադրության պայմաններում: Դա հաստատվում է հատկապես Սալմանասար I–ի (մ.թ.ա. 13–րդ դար) մի արձանագրության մեջ հիշատակված Ուրուատրի ցեղային միության 8 մարզերի՝ Խիմմեի, Ուատկունի, Բարգունի, Սալուայի, Խալիլայի, Լուխայի, Նիլիպախրիի և Զինգունի տեղադրումներով[9]: Նույնիսկ Վանա լճի ավազանում և հարակից տարածքներում ուրարտացիները հաստատվել են միայն 9–րդ դարի կեսերին, այսինքն՝ պետականություն ստեղծելու պահին: Հենց այդ ժամանակ էլ այստեղ նրանք սկզբում հիմնադրել են իրենց Արծաշքու–Արծկե, իսկ ավելի ուշ՝ Տուշպա–Տոսպ մայրաքաղաքները:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային նահանգներին ու գավառներին, ապա ուրարտացիները այնտեղ երևացել են սոսկ մ.թ.ա. 9–րդ դարի վերջերին կամ 8–րդ դարի սկզբներին: Հետագայում, մ.թ.ա. 7–րդ դարում՝ Ուրարտուի անկման դարաշրջանում, երբ մեկը մյուսի ետևից կորսվում էին նրա նախկինում ձեռք բերած մարզերը հարավում, արևմուտքում և արևելքում, ապա այդ ժամանակ վերելք ապրող հայկական ցեղերն ու ցեղային միությունները, Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքներից աստիճանաբար դուրս են մղում ուրար-

տացիներին և գամում նրանց սկզբնական սահմանափակ տարածքին՝ Վանա լճի ավազանն ու նրա շրջակայքը:

Փոքրիշատե հեռավոր տարածքներից հյուսիսում Ուրարտուի կազմում, նրա անկման դարաշրջանում, (որքան մեզ հայտնի է), մնում է միայն Արարատյան դաշտավայրի Վազա երկիրը՝ Թեյշեբաինի վարչա–տնտեսական կենտրոնով:

Հստակեցնենք, որ հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների վարագույրի հետևում թաքնված է վաղ հայկական ցեղերի ու ցեղային միությունների տարածման արեալը, մ.թ.ա. II–I հազարամյակներում լայնատարած Հայկական լեռնաշխարհում՝ հյուսիսում մինչև պատմական Կողքիս, Կղարջք և Ջավախք, հյուսիս–արևմուտքում՝ մինչև պատմական Տայք, հյուսիս–արևելքում՝ մինչև Սևանա լճի ավազանը, Գեղամա լեռները և Սյունիք, արևելքում՝ մինչև Ուրմիա լճին արևելքից հարող շրջանները, արևմուտքում՝ մինչև անդրեփրատյան տարածքները, իսկ հարավում՝ մինչև Տիգրիսի և Մեծ Զաբի վերին հոսանքները:

Այն հանգամանքը, որ հայերը ի հնուց անտի (համենայն դեպս մ.թ.ա. II հազարամյակից) եղել են Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները, ապա հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունների հետ միասին, հաստատվում է նաև մի շարք այլ հավաստի կռվաններով:

Ի դեպ հայերի էթնոգենեզի վերաբերյալ ժամանակին առաջ քաշված միգրացիոն տեսությունը Բալկաններից՝ հայերենի հնդեվրոպական լեզու լինելու հիմքի վրա, վաղուց ապրել է իր դարը: Նորագույն հայտնագործումներն էլ, ընդհակառակը, վկայում են, որ հնդեվրոպական նախացեղերի հայրենիքը եղել են Հայկական լեռնաշխարհը և հարակից տարածքները[10]: Դա հիմնավորվում է նաև հայերենի և սեպագիր աքքադերենի, հայերենի և սեպագիր ուրարտերենի ընդհանրություններով:

Ներկայումս պարզվել է նաև, որ հայերենի բառապաշարի մի հարուստ շերտ, որը չի բացատրվում հնդեվրոպական արմատների միջոցով, բավական համոզիչ հիմնավորվում է սեմական լեզվախմբին պատկանող աքքադերենի (ասսուրա–բաբելերենի) հետ ունեցած անվիճելի աղերսներով, որը հաստատում է այն փաստը, որ հայերը, համենայն դեպս սկսած մ.թ.ա. II հազարամյակից, ե-

ղել են ասորեստանցիների հյուսիսային հարևանները: Հետևաբար, ինքնին հասկանալի է, որ բառապաշարային այդ ընդհանրությունները, ավելի ճիշտ՝ սեմալեզու աքքադերենի բառապաշարի ներթափանցումը հնդեվրոպալեզու հայերեն, արդյունք է վաղ հայկական ցեղերի և ասորեստանցիների քաղաքական և տնտեսական դարավոր շփումների:

Շատ ավելի վստահ կարելի է պնդել հնդեվրոպական հայերենի և ոչ հնդեվրոպական ուրարտերենի բառամթերքի ընդհանրությունների մասին: Հատկանշական է, որ այստեղ հայերենի ներթափանցումը ուրարտերեն և հակադարձ պրոցեսը՝ ուրարտերենի բառապաշարի ներփափանցումը հայերեն ընթացել է շատ ավելի բարենպաստ պայմաններում: Այդ կապակցությամբ պետք է նկատել, որ հայկական ցեղերն ու ցեղային միությունները և պետականության դարաշրջանի ուրարտացիները ապաստանել են կողք–կողքի, միևնույն ընդարձակ տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում:

Այսպիսով, ի մի բերելով վերը շարադրված նյութը, դժվար չէ նկատել, որ հին հայկական նահանգներն ու գավառները, սեպագիր արձանագրություններում հիշատակվում են ասորեստանյան, խեթական և ուրարտական զավթիչների կողմից դրանք ասպատակելու կամ նվաճելու կապակցությամբ: Իսկ դա նշանակում է, որ հիշյալ ռազմական բախումների հիմքում հին հայկական ցեղերի ու ցեղային միությունների դարավոր անհաշտ պայքարն էր հինարևելյան հզոր տերությունների դեմ՝ իրենց անկախության համար:

Ռազմական այդ սիստեմատիկ բախումների ընթացքում, հին հայկական ցեղերն ու ցեղային միությունները աստիճանաբար բուռն վերելք են ապրում և իրենց հիմնական ախոյանին՝ Թիայնիլի–Ուրարտուին քայլ առ քայլ դուրս մղում Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքներից:

Այդ պայքարում, անկասկած, հարավում զգալի դեր են խաղացել նաև սկզբում Ասորեստանը, իսկ այնուհետև Բաբելոնիան և Մեդիան (Մարաառանը), ինչպես նաև կիմմերները և սկյութները: Ի դեպ այն հանգամանքը, որ մասնագիտական գրականության մեջ սովորաբար ուրատացիների գերեզմանափոր են ներկայացվում սոսկ մեդիացիները (մարերը), բաբելացիները, մասամբ էլ սկյութներն ու կիմմերները, ամենևին լիարժեք չի արտահայտում

պատմական իրողությունը: Միամտություն կլիներ խորհել, թե Մեդիան (Մարաստանը) ե Բաբելոնիան կարող էին կործանել երբեմնի հզորագույն Ուրարտուն և այդ երկիրը սկուտեղի վրա հրամցնել հայերին: Հետևաբար, դժվար չէ կռահել, որ հինարևելյան ուրարտական պետության հիմնական կործանարար ուժերը իրավամբ եղել են տեղի հին հայկական հզորագույն ցեղային միությունները, որոնք, այնուհետև, հենց նույն տարածքի վրա հիմնել են իրենց մնայուն պետականությունը:

Ինչ վերաբերում է ուրարտացիներին, ապա նրանք և՝ ֆիզիկապես և՝ մշակույթով աստիճանաբար լիովին ձուլվել են կազմավորված հայ ժողովրդին: Դրանից հետևում է, որ եթե անցյալի ուրարտացին հայ չէր, ապա ներկայիս հայը նաև ուրարտացի է:

Մի խոսքով, հին հայկական ցեղային միությունների դարավոր պայքարի պատմությունը ասորեստանցիների, խեթերի և ուրարտացիների դեմ Հայկական լեռնաշխարհում, փաստորեն, հայ ժողովրդի կազմավորման դարաշրջանի պատմությունն է, ուրարտացիների (և ոչ միայն ուրարտացիների) ըստ ամենայնի հայերի մեջ տարրալուծվելու պատմությունը:

Ընդհանուր առմամբ սրանք են հայ–ասորեստանյան, հայ–խեթական և հայ–ուրարտական տեղանունների ու ցեղանունների ընդհանրությունները և նրանց քողի տակ թաքնված հավաստի պատմական արմատները:

NICOLAY HAROUTHIOUNYAN

ANSIENT ARMENIAN TOPONYMS AND ETHNONYMS IN CUNEIFORM SOURCES AND THEIR HISTORICAL ROOTS

Numerous Armenian–Assyrian, Armenian–Hittite and Armenian–Urartian toponymical and ethnonymical correspondences (e.g. Alzini — A• jnik^{c}, Diauhi — Tayk^{c}, Zabaha — • avaxk^{c}, • upani — Copk^{c}, • uluku — • • uk etc.) revealed in the cuneiform inscriptions of ancient oriental kings describing their military campaigns to the Armenian highland allows us to assume that we deal with Armenian toponyms and ethnonyms reflected in cuneiform and, hence, the population of these territories was Armenian.

This assumption is corroborated by a number of Akkadian, Hittite and Urartian borrowings in Armenian. It also follows that the main destructive forces that caused the fall of the Urartian kingdom were Armenian tribal unions, the predecessors of the later Armenian state.

In the following centuries the Urartian population assimilated gradually to Armenians, thus contributing to the ethnogenetical process of the Armenian nation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. М.В.Никольский, Клинообразные надписи Закавказья, Москва, 1986, с. 72:
2. J.Sandalgian, Les inscriptions cuneiformes urartiques, Venise, 1900, p. 415, 428, 446:
3. J.Marquart, Eränšahr nach der Geographie des Pseudo–Moses Chorenazi, Berlin, 1901, s. 168:
4. Н.Я.Марр и И.А.Орбели, Археологическая экспедиция 1916г. в Ван, Петербург, 1922, с. 58—59:
5. Г.А.Капанцян, Историко—лингвистическое значение топономики древней Армении, 1940, с. 44; նույնի, Chetto–Armeniaca, Эривань, 1931, с. 104.
6. N.Adontz, Histoire d'Armenie, Paris, 1946, p. 155, 199, 201.
7. О.О.Карагезян, Город Кутуме урартских источников, «Պատմա–բանասիրական հանդես», 1974, N. 3, էջ 191–192:
8. Н.В.Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 9—10, 62—63, 177—179, 236—237.
9. Н.В.Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, с. 12—17:
10. Т.В.Гамкрелидзе, В.В.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Ч. 1–II, Тбилиси, 1984.